ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՌԱԴԻՈՅՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

4. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 9

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11

▪ Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող լիցենզավորված հեռուստաընկերություններ 13

▪ Կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններ 15

▪ Լիցենզավորված ռադիոընկերություններ 18

▪ Վերգետնյա եթերային և անալոգային տիրույթում հեռարձակում իրականացնող տարածքային հեռուստաընկերություններ 19

▪ Առանց լիցենզիա հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերություններ 22

6. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 23

▪ Ամբողջական տեղեկատվություն և վիճակագրական տվյալներ 23

▪ Սեփական արտադրության հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման թույլտվությունների տրամադրման գործընթաց 24

▪Ոչ սեփական հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման թույլտվությունների տրամադրման գործընթաց 25

▪ Հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի տարածքում հեռուստառադիոհաղորդումների վերահեռարձակման ծանուցում 26

▪ Լիցենզավորման մրցույթներ 27

7. ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ 28

8. ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ 30

9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 33

10. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՅԻ ՄՈՒՏՔԵՐ 35

11. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ 35

▪ Տեղեկատվություն Հանձնաժողովի նիստերի և ընդունված իրավական ակտերի վերաբերյալ 35

▪ Տեղեկատվություն Հանձնաժողով հասցեագրված գրությունների և քաղաքացիների հարցումների վերաբերյալ 37

▪ Հանձնաժողովի անձնակազմի կառավարում 37

12. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂ 39

▪Հանրային հեռուստաընկերություն 39

▪ Հանրային ռադիոընկերություն 42

Հավելված 1 44

Հավելված 2 48

Հավելված 3 51

Հավելված 4 56

Հավելված 5 58

Հավելված 6 60

Հավելված 7 62

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 43-րդ հոդվածների համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Ազգային ժողով է ներկայացնում 2019 թվականի իր գործունեության և հեռուստատեսությունում ու ռադիոյում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում:

Հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը: Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, տեղեկատվության բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Տարեկան հաղորդման մեջ ներկայացված են փաստացի տվյալների հիման վրա կատարված վերլուծությունների արդյունքները, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի, Հանձնաժողովի գործունեության անկախության, թափանցիկության և հաշվետվողականության, հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների Հանձնաժողովի կողմից լիցենզավորման գործընթացի և դրանց գործունեության մշտադիտարկման, ինչպես նաև Հանձնաժողովի միջազգային համագործակցության և այլ լիազորությունների իրականացման վերաբերյալ:

2. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՌԱԴԻՈՅՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության հիմնական իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է, որը երաշխավորում է զանգվածային լրատվամիջոցների, այդ թվում՝ ռադիոյի և հեռուստատեսության ազատությունն ու անկախությունը:

Հանձնաժողովը բարձր է գնահատում Հայաստանի հեռարձակող կազմակերպությունների ազատ գործելու առաջընթացը հաշվետու տարում: Մամուլի ազատության համաշխարհային ցուցիչի համաձայն՝ մեր երկիրը 19 կետով բարելավել է իր դիրքերը և զբաղեցրել 61-րդ տեղը, հետևում թողնելով հետխորհրդային գրեթե բոլոր երկրներին և Եվրոպայի խորհրդի անդամ մի շարք պետությունների:

2018 թվականի մայիսին նոր իշխանությունների հռչակած ժողովրդավարական սկզբունքներից էր՝ մամուլի իրական ազատության ապահովումն ու լրատվամիջոցների գործունեությանը չմիջամտելու ստանձնած պարտավորությունը: Միջազգային կառույցների, Հայաստանի մեդիաոլորտի փորձագետների գնահատականները, Հանձնաժողովի ուսումնասիրությունները, ամենօրյա շփումը հեռարձակող կազմակերպությունների ղեկավար անձանց հետ, հեռարձակող կազմակերպություններին ուղղված գրավոր հարցադրումների պատասխանները վկայում են, որ իշխանությունները հիմնականում հավատարիմ են իրենց հռչակած սկզբունքներին և ստանձնած պարտավորություններին:

Սակայն այս ընդհանուր գնահատականը ամենևին չի նշանակում, որ Հանձնաժողովը հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակը համարում է բավարար, իսկ հեռարձակվող լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը, բազմակարծությունն ու բազմազանությունը՝ որպես կայացած և անշրջելի ձեռքբերում: Անցյալից ժառանգված էական թերություններ ունեցող ներկայիս օրենսդրությունը, հեռուստատեսային

գովազդի ծավալների կտրուկ անկումը, կարգավորման տակ գտնվող վերգետնյա հեռարձակողների և համացանցում տեսալսողական ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև մրցակցային անհավասար պայմանները, հեռուստառադիոընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման հստակ մեխանիզմների բացակայությունը, Հանձնաժողովի սահմանափակ լիազորությունները, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների պայթյունային զարգացումը և այլ բազմաթիվ գործոններ լուրջ խոչընդոտ են առաջացնում Հայաստանում ազատ, անկախ, հանրային շահը սպասարկող տեսալսողական ծառայությունների կայուն համակարգ ստեղծելու գործում: Ցանկանում ենք նաև ընդգծել, որ հաշվետու տարում հեռարձակողների անկախությունը սահմանափակվում էր մի շարք հեռուստառադիոընկերությունների հիմնադիրների, փայատերերի ազդեցությամբ, խմբագրական և կադրային քաղաքականությանը միջամտությամբ: Նաև այդ ազդեցությամբ և միջամտությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ մի շարք վերգետնյա հեռարձակողներ հաճախ անտեսում են հանրային շահը, քաղաքացիների իրավունքը ստանալ անկողմնակալ և բազմազան տեղեկատվություն և սպասարկում են քաղաքական ուժերի և ֆինանսատնտեսական խմբավորումների շահերը: Հեռարձակող կազմակերպությունների ազատության կայացման հարցում շատ կարևոր խնդիր է հեռուստառադիոընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման հստակ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, որպեսզի բացառվի հիմնադիրների և փայատերերի կողմից ճնշումը հեռուստառադիոընկերության բովանդակային քաղաքականության վրա և ապահովվի քաղաքացիների իրավունքը՝ ստանալու ատելության խոսքից և մանիպուլյացիաներից զուրկ, օբյեկտիվ, անկողմնակալ և ճշմարտացի տեղեկատվություն:

Ուստի Հանձնաժողովն արձանագրում է, որ Հայաստանում դեռևս ձևավորված չէ տեսալսողական ծառայությունների մատուցման և սպառման այնպիսի համակարգ, որը կբնութագրվեր հեռարձակող ընկերությունների լիարժեք անկախությամբ, ազատությամբ, բազմակարծությամբ, բազմազանությամբ և կսպասարկեր հանրային շահը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կարգավորող մարմնի ստեղծումից ի վեր մի քանի հիմնարար հարցեր են մշտապես եղել քաղաքացիական հասարակության մտահոգության գլխավոր առարկան, այն է՝ Հանձնաժողովի իրական անկախությունը, հաշվետվողականությունը, գործունեության թափանցիկությունը: Որևէ մեկի համար գաղտնիք չէ, որ չնայած Հանձնաժողովի օրենսդրորեն ամրագրված ինստիտուցիոնալ անկախությանը՝ մինչև 2018 թվականի մայիս ամիսն այն գտնվել է իշխանության վերին օղակների ոչ բացահայտ հսկողության ներքո և քաղաքական առանցքային որոշումներն ընդունվել են կարգավորող մարմնից դուրս: Քաղաքական նոր ղեկավարությունը չի միջամտում հեռուստառադիո ոլորտի կարգավորման գործընթացին, և 2019 թվականին Հանձնաժողովը գործել է ազատ և անկախ, պատասխանատվություն կրելով իր բոլոր որոշումների համար: Հանձնաժողովն ամենայն պատասխանատվությամբ հայտարարում է, որ հաշվետու տարվա ընթացքում որևէ պետական մարմին, գործադիր, օրենսդիր իշխանության ներկայացուցիչ կամ կառույց չի միջամտել Հանձնաժողովի գործունեությանը կամ որոշումների ընդունմանը:

Այդ հանգամանքը թույլ է տվել Հանձնաժողովին հաշվետու տարում էապես բարձրացնել գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Հանրությանը և պետական հաստատություններին պատշաճ և ժամանակին ներկայացվել են կատարված աշխատանքները, ապահովվել է հետադարձ կապը քաղաքացիների և տարբեր շահագրգիռ կազմակերպությունների հետ: 2019 թվականին մշակվել և գործարկվել են նոր, ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված Հանձնաժողովի պաշտոնական ինտերակտիվ կայքը (www.tvradio.am) և ֆեյսբուքյան էջը (https://www.facebook.com/tvradio.Armenia/): Հանձնաժողովի նիստերն անցկացվել են դռնբաց (բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվության վերաբերյալ հարցերի) և հաճախ՝ կապված հարցի կարևորությունից և հանրային հետաքրքրությունից՝ ուղիղ հեռարձակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

Հանձնաժողովի գործունեության մասին հանրության իրազեկման նպատակով կազմակերպել և անցկացվել են մամուլի ասուլիսներ, ճեպազրույցներ հարցազրույցներ:

Հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստվել են մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ և այլ տեղեկատվական նյութեր: Ստեղծման օրից հետո առաջին անգամ 2019 թվականին հանրության, հեռարձակող կազմակերպությունների և մեդիամասնագետների համար Հանձնաժողովը պարբերաբար պատրաստել և հրապարակել է մեդիաշուկայի հետազոտության արդյունքները, վերլուծական հոդվածներ, գծապատկերներ, մշտադիտարկման արդյունքների ամփոփագրեր, հեռուստատեսային վարկանիշների տվյալներ և այլն: Հետազոտության արդյունքում ստացված տեղեկությունները ենթարկվել են վերլուծության և այդ տվյալներից մի քանիսը ներկայացված են *Հավելված 1-ում:* Այնուամենայնիվ, փաստենք, որ ապագայում ավելի որակով հետազոտություններ կատարելու համար Հանձնաժողովին անհրաժեշտ կլինեն ավելի շատ ռեսուրսներ:

Այդուհանդերձ, գործող օրենսդրությունը պարունակում է ակնհայտ իրավական թերություններ, որոնք կարգավորող մարմնի համար չեն ապահովում, օրինակ, ֆինանսական անկախության որևէ արդյունավետ գործիք: Անհրաժեշտ են Հանձնաժողովի ֆինանսական անկախությունն երաշխավորող լրացուցիչ մեխանիզմներ, որոնք կհամապատասխանեն Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված ստանդարտներին: Օրենքով սահմանված բյուջեի հաշվարկների ճշգրիտ կանոնները կարող են լինել Հանձնաժողովի անկախությունն երաշխավորող այդպիսի գործիք: Հանձնաժողովի բյուջեն հաշվարկելիս կարող են հաշվի առնվել լիցենզիայի և հաճախականությունների համար վճարների ձևով ոլորտից ստացված պետական եկամուտները:

4. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը հնացած, բազմաթիվ թերի դրույթներ պարունակող իրավական փաստաթուղթ է, որը չի համապատասխանում առաջատար ժողովրդավարական երկրներում տեսալսողական մեդիա ծառայությունների ներկա համայնապատկերի բնութագրիչներին: Սույն օրենքն ուժի մեջ է մտել այն ժամանակ, երբ

անալոգային ռադիոն և հեռուստատեսությունը համարվել են տեսալսողական ծառայությունների միակ տեսակը, որը կարող էր հասանելի լինել քաղաքացիների մեծամասնության համար: Վերգետնյա թվային հեռուստատեսությանն անցում կատարելու գործընթացի մասնակի ավարտը, տեսալսողական մեդիա ծառայությունների (այդ թվում՝ ըստ պահանջի ծառայությունների և տեսանյութերի տարածման հարթակների) տրամադրման եղանակների ընդլայնումը, ինչպես նաև ոչ վերգետնյա բաշխման համակարգերի (կաբելային, արբանյակային, IP) ընդլայնումը «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը վերածել են այնպիսի օրենսդրական ակտի, որով կարգավորվում է ներկայումս Հայաստանում մատուցվող ծառայությունների միայն մի փոքր մասը:

Ավելին, թվային հեռարձակման ներկայիս լիցենզիաները չեն պարունակում մանրամասն պահանջներ՝ բովանդակային պարտավորությունների վերաբերյալ («Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով նախատեսված են միայն հեռուստածրագրերի թեմատիկ ուղղվածությունները), հետևաբար Հանձնաժողովն այսօրվա դրությամբ չունի բովանդակության հետ կապված չափորոշիչները մշտադիտարկման ենթարկելու որևէ լիազորություն:

Տեսալսողական մեդիայի վերաբերյալ նոր օրենքի դերը պետք է ուղղված լինի արդեն իսկ գոյություն ունեցող տարբեր մեդիա ընկերությունների գործունեությունը հեշտացնելուն և հանրային ոլորտի շրջանակներում նրանց դերին և դիրքին համաչափ ու համապատասխան իրավունքների և պարտականությունների համակարգ ստեղծելուն՝ այդպիսով խուսափելով ավելորդ կամ անհամաչափ սահմանափակումներից: Դրանով պետք է դյուրացվի նաև նոր մեդիա ընկերությունների մուտքը շուկա և ապահովվի տարբեր տեսակի մեդիաների միջև հավասարակշռված մրցակցային միջավայր:

Տեսալսողական մեդիայի վերաբերյալ նոր օրենքի ընդունումը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում իրականացնող 26 հեռուստաընկերությունների լիցենզիաների գործողության ժամկետը լրանում է և ըստ գործող օրենքի 2020 թվականին Հանձնաժողովը պետք է հայտարարի լիցենզավորման մրցույթներ:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հեռարձակում են իրականացրել 126 հեռուստառադիոընկերություն: Հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիաների հիման վրա գործել են 118 հեռուստառադիոընկերություն, այդ թվում՝ 100 հեռուստաընկերություն և 18 ռադիոընկերություն:

Հեռուստաընկերություններից 31-ը իրականացրել են վերգետնյա եթերային, 69-ը՝ կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում *(Հավելված 2, Հավելված 3)*:

Եթե համեմատում ենք Հանձնաժողովի կողմից լիցենզավորված հեռուստառադիոընկերությունների քանակը, ապա 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ևս գործել են 100 լիցենզավորված հեռուստաընկերություն, սակայն մեդիադաշտը կրել է որոշակի փոփոխություն՝ ավելացել է կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, սակայն պակասել՝ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների թվաքանակը, ռադիոընկերությունների թիվը մնացել է անփոփոխ:



Ստորև ներկայացվում է հեռուստառադիոընկերությունների թվաքանակն արտացոլող գծապատկերն՝ ըստ հեռարձակման տեսակի:



Գծապատկեր. Հեռուստառադիոընկերությունների թվաքանակը

ՎԵՐԳԵՏՆՅԱ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐԶԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերգետնյա եթերային հեռուստաընկերություններից թվային հեռարձակման ցանցի միջոցով լիցենզիայի հիման վրա հեռարձակում են իրականացրել 22 հեռուստաընկերություն, այդ թվում՝ 6 հանրապետական, 9 մայրաքաղաքային և 7 տարածքային սփռման:

Անալոգային տիրույթում հեռարձակում են իրականացրել 9 տեղական հեռուստաընկերություն:

Ստորև ներկայացվում է 2018 և 2019 թվականների վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների թվաքանակը՝ ըստ սփռման տարածքի.



Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով վերահսկում է, որ հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակումը մեկ հեռուստաալիքով (ռադիոալիքով) ամսական ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս չլինի:

Ստորև ներկայացվում է հանրապետական և մայրաքաղաքային սփռման հեռուստաընկերությունների հաղորդումների կառուցվածքը՝ ըստ հայրենական և օտարերկրյա արտադրության.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՓՌՄԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՑԱՆՑՈՎ ՀԵՌԱՐԶԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող 69 հեռուստաընկերություններից 21-ը գործել են Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 9-ը՝ Երևան քաղաքի, 6-ը՝ մեկից ավելի մարզերի և 33-ը՝ մեկ մարզի տարածքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՀԵՌԱՐԶԱԿՎՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



Կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների թվաքանակը տարեցտարի ավելանում է, բացառություն չի կազմել նաև հաշվետու տարին՝ 2019 թվականի ընթացքում տրամադրվել է կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման 12, դադարեցվել՝ 8 լիցենզիայի գործողություն:

Ըստ թեմատիկ ուղղվածության այսպիսին է պատկերը կաբելային (մալուխային) ցանցով վերահեռարձակվող հեռուստածրագրերի.

ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՑԱՆՑԵՐՈՎ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



Հանձնաժողովի կողմից կատարվել է նաև ուսումնասիրություն Հայաստանի Հանրապետության մարզերում կաբելային (մալուխային) ցանցերից օգտվող տնային տնտեսությունների քանակի վերաբերյալ (*Հաշվարկում ընդգրկված չեն՝ Rostelecom, Ucom, Beeline ընկերությունները (BeeTV,Combo, C TV)*:

ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՑԱՆՑԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ [1]

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ	2935
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ	5000
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	4800
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ	1970
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ	2865
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ	1700
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ	700
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ	150
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ	5360

[1]*Հաշվարկում ընդգրկված չեն՝ Rostelecom, Ucom, Beeline* (CTV, Bee TV, *Combo*)



Ստորև ներկայացված է կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների կողմից վերահեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն.



Կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների կողմից վերահեռարձակվող հաղորդումների 81 %-ը ռուսերեն լեզվով է, 15%-ը՝ հայերեն և միայն 4%-ը այլ լեզվով: Հանձնաժողովի կարծիքով անհրաժեշտ է ներդնել կաբելային օպերատորների գործունեության կարգավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք կավելացնեն հայերեն լեզվով հաղորդումների քանակը:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Լիցենզիայի հիման վրա FM տիրույթում հեռարձակում իրականացնող 18 ռադիոընկերություններից 3-ը գործել են Հայաստանի Հանրապետության, 13-ը՝ Երևան քաղաքի և 2-ը՝ յուրաքանչյուրը մեկ մարզի տարածքում՝ Շիրակի և Լոռու մարզերում *(Հավելված 4)*: Լիցենզավորման մրցույթներն անցկացվել են 2017 թվականին և տրված լիցենզիաները գործելու են մինչև 2027 թվականը:

Հաշվետու տարում ռադիոընկերությունները կայուն զարգացել են, ապահովելով, որոշ բացառությամբ, օրենսդրության պահանջները գովազդի, հեղինակային իրավունքի, հայերեն լեզվով արտադրանքի (բացառությամբ երաժշտական բովանդակության) վերաբերյալ: Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք ռադիոընկերությունների եթերում գրանցվել է տեղեկատվական բնույթի ռադիոծրագրերի (լրատվական թողարկումներ, հարցազրուցային ժանրի հաղորդումներ և այլն) զգալի աճ: Մի շարք ռադիոընկերություններ մեծ արդյունավետությամբ օգտագործում են տեսալսողական օնլայն հարթակներ, որտեղ հնարավոր է տեսնել պահոցային նյութեր, լսել և կարդալ հեղինակային հաղորդումներ, առցանց շփվել հաղորդավարի հետ և այլն: Այդ օնլայն հարթակների օգտագործումը հանդիսանում է նաև հավելյալ եկամուտների աղբյուր, ինչը նպաստում է ռադիոների զարգացմանն ու անկախությանը:

Հանձնաժողովն օրենսդրական բացթողում է համարում մարզային սփռում ունեցող մասնավոր ռադիոընկերությունների քանակի սահմանափակումը: Անտրաբանական է, երբ գործող իրավակարգավորումների համաձայն ռադիոծրագրերի հեռարձակում կարող է իրականացվել միայն երկու մարզում, ինչը խոչընդոտում է մարզերի համաչափ զարգացումը, նվազեցնում՝ մյուս մարզերի բնակիչների հնարավորությունը ստանալու տեղական խնդիրներին վերաբերվող տեղեկատվություն: Համաշխարհային փորձը, այդ թվում նաև հետխորհրդային

երկրների, ցույց է տալիս, որ մարզային ռադիոն տվյալ տարածաշրջանի տնտեսության զարգացման վրա որոշակի ազդեցության գործոն է: Պետք է նաև հաշվի առնել, որ հատկապես սահմանամերձ մարզերում ռադիոն հանդիսանում է իրազեկման արագ միջոց արտակարգ իրավիճակների ժամանակ: Անհրաժեշտ է օրենսդրորեն ազատականացնել մրցույթով ռադիոհաճախականությունների տրամադրումը:

ՎԵՐԳԵՏՆՅԱ ԵԹԵՐԱՅԻՆ ԵՎ ԱՆԱԼՈԳԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն թվային հեռարձակման ցանցի միջոցով յուրաքանչյուր մարզում հեռարձակում են իրականացնում ընդհանուր ուղղվածության և տվյալ տարածքի հետաքրքրությունները բավարարող

մեկական տարածքային սփռման մասնավոր հեռուստաընկերություն: Օրենքի անցումային դրույթներով անալոգային տիրույթում հեռարձակում իրականացնող տեղական հեռուստաընկերություններին հնարավորություն էր տրվել շարունակել գործել մինչև թվային հեռարձակման նոր մրցույթի անցկացումը, այսինքն մինչև 2020 թվականի ավարտը: 2021 թվականին այդ հեռուստաընկերությունները կզրկվեն եթերային հեռարձակման հնարավորությունից, քանի որ ՀՀ-ում գործում է միայն մեկ թվային մուլտիպլեքս:

Հաշվետու տարում թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում են իրականացրել 7 տարածքային սփռման և անալոգային տիրույթում՝ 9 տեղական հեռուստաընկերություն:

Մի շարք հասարակական կազմակերպությունների և մեդիափորձագետների կարծիքով անալոգային տիրույթում գործող հեռուստաընկերությունների հեռարձակման դադարեցման պատճառով մարզերի բնակչությունը կարող է զրկվել հեռուստածրագրերի ընտրության հնարավորությունից, տեղական նորությունների և խնդիրների այլընտրանքային լուսաբանումից: Սակայն, անհրաժեշտ ենք համարում նշել, որ թվայնացումից հետո տեղական անալոգային հեռուստածրագրերը կորցրել են իրենց հիմնական լսարանը, որպես հետևանք՝ գովազդային գործունեությունից առաջացող եկամուտները և այդ հեռուստածրագրերից շատերը այլևս հնարավորություն չունեն պատրաստելու և հեռարձակելու որակյալ, բնակչության տեղեկատվական կարիքները բավարարող, մարզի սոցիալական, մշակութային, տնտեսական խնդիրները լուսաբանող բովանդակությամբ նյութեր: Ավելին, այդ հեռուստաընկերությունները հաճախ են խախտում հեղինակային իրավունքի, հայրենական արտադրանքի նվազագույն քանակի պահպանման օրենսդրական պահանջները: Այդ է պատճառը, որ 2019 թվականին անալոգային տիրույթում հեռարձակում իրականացնող երեք հեռուստաընկերություն իրենց դիմումի համաձայն հրաժարվել են լիցենզիայից, քանի որ ի զորու չեն եղել կատարելու օրենսդրությամբ սահմանված կանոնները, լիցենզիոն պարտավորությունները և Հանձնաժողովի օրինական պահանջները:

Հանձնաժողովը մտահոգիչ է համարում նաև թվային տիրույթում հեռուստածրագրեր հեռարձակող մի շարք մարզային հեռուստաընկերությունների ֆինանսական, տեխնիկական, ստեղծագործական իրավիճակը, որը բացասաբար է անդրադառնում տվյալ հեռուստածրագրերի

բովանդակության վրա: Ավելին, Հանձնաժողովի հայցի հիման վրա դատարանի վճռով ուժը կորցրած է ճանաչվել թվային ցանցի միջոցով եթերային հեռարձակման 1 լիցենզիա: Եվ 2019 թվականին թվային մուլտիպլեքսում բացակայում էին Տավուշի, Վայոց ձորի, Արագածոտնի մարզերի հեռուստածրագրերը:

Ահա այսպիսին է մարզային հեռուստաընկերություններում հեռարձակված ծրագրերի եթերի կառուցվածքը.

ՄԱՐԶԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԻԱ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում հեռարձակվում են հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը և միջպետական պայմանագրի հիման վրա գործող հեռարձակողները:

Հաշվետու տարում հեռարձակվել են հանրային հեռուստառադիոընկերության 2 հեռուստածրագիր՝ հանրապետական սփռում ունեցող «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Շողակաթ» հեռուստածրագրերը և 3 ռադիոծրագիր՝ հանրապետական սփռում ունեցող «Հայաստանի հանրային ռադիոընկերության» ՓԲԸ-ի Հանրային ռադիոյի առաջին ծրագիրը և մայրաքաղաքային սփռում ունեցող «Հայաստանի հանրային ռադիոընկերության» ՓԲԸ-ի Հանրային ռադիոյի երկրորդ ծրագիր «Իմ ռադիո» և «Հայաստանի հանրային ռադիոընկերության» ՓԲԸ-ի «ՎԷՄ» հոգևոր-մշակութային ռադիոծրագիրը:

Միջպետական պայմանագրերի հիման վրա վերահեռարձակվել են մայրաքաղաքային սփռում ունեցող 1 հեռուստածրագիր՝ «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ «ՄԻՐ» հեռուստածրագիր (ռուսերեն լեզվով) և մայրաքաղաքային սփռում ունեցող 2 ռադիոծրագիր՝ «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ «ՄԻՐ» ռադիոծրագիր (ռուսերեն լեզվով) և «ԷՌ ԷՖ ԱՅ» (RFI) ռադիոծրագիր (Ֆրանսիա, ֆրանսերեն լեզվով):

6. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2019 թվականին Հանձնաժողով է ներկայացվել հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման լիցենզիա ստանալու 15 դիմում, որից 3-ը մերժվել է՝ ներկայացված փաստաթղթերի թերի, ինչպես նաև գործարար ծրագրերի ոչ իրատեսական և չհիմնավորված լինելու հիմքով: Արդյունքում տրամադրվել է կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման 12 լիցենզիա, որից 5-ը՝ Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 1-ը՝ Երևան քաղաքի, 2-ը՝ մեկից ավելի մարզերի և 4-ը՝ մեկ մարզի տարածքում սփռման համար *(Հավելված 5):*

2019 թվականին Հանձնաժողով է ներկայացվել լիցենզիաների վերաձևակերպման համար 8 դիմում, որոնք սահմանված կարգով բավարարվել են: Լիցենզիաներից 2-ը վերաձևակերպվել են անվանման, 5-ը՝ գտնվելու վայրի, իսկ 1-ը անվանման և գտնվելու վայրի փոփոխության հիմքերով:

Հաշվետու տարում լիցենզիաների գործողությունը դադարեցնելու մասին դիմումների համաձայն և լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով դադարեցվել է հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման 8 լիցենզիա և տեղական հեռուստաընկերությունների եթերային անալոգային հեռարձակման 3 լիցենզիա, ինչպես նաև Հանձնաժողովի հայցի հիման վրա դատարանի վճռով ուժը կորցրած է ճանաչվել թվային ցանցի միջոցով եթերային հեռարձակման 1 լիցենզիա *(Հավելված 6)*:

ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվետու տարում կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող 7 ընկերությունների տրամադրվել են սեփական արտադրության 13 հեռուստածրագրերի հեռարձակման թույլտվություններ *(Հավելված 7)*:

2018 և 2019 թվականներին տրամադրված սեփական ծրագրերի հեռարձակման թույլտվությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2018 թվականին կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող 9 ընկերությունների տրվել է սեփական արտադրության 19 հեռուստածրագրերի հեռարձակման թույլտվություններ, իսկ 2019 թվականին՝ 7 ընկերությունների՝ 13 թույլտվություն:

ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ



Սակայն արձանագրենք, որ վերջին տարիներին աճել է կաբելային (մալուխային) ցանցով սեփական ծրագրերի հեռարձակման պահանջարկը և հաշվետու տարվա վերջում ընդհանուր թիվը կազմել է 42:

ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՀԵՌԱՐԱԿՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հայաստանի Հանրապետությունում կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող ընկերությունները ոչ սեփական հեռուստառադիոհաղորդումները կարող են վերահեռարձակել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում: Հաշվետու տարում Հանձնաժողովի կողմից կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակում իրականացնող ընկերություններին ոչ սեփական հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման թույլտվություն տրամադրելու գործառույթի շրջանակում ուսումնասիրվել է ավելի քան 330 պայմանագիր և հեռարձակման իրավունքը հավաստող այլ փաստաթղթեր, որի արդյունքում տրամադրվել է 1618 ոչ սեփական հեռուստածրագրերի վերահեռարձակման թույլտվություն:



Հանձնաժողովը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս 2019 թվականի ընթացքում արձանագրել է հեռուստաընկերությունների կողմից հեղինակային իրավունքի խախտման 10 դեպք: Վարչական վարույթի արդյունքում 3 հեռուստաընկերության նկատմամբ կիրառել է գրավոր նախազգուշացում՝ խախտումը վերացնելու պահանջով, 2 հեռուստաընկերության նկատմամբ՝ տուգանք (գրավոր նախազգուշացումից հետո մեկ տարվա

ընթացքում նույն խախտումը կրկնելու հիմքով) և 5 հեռուստաընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթները կարճվել են:

ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ, ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ, ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԵՐԻ և ՆՄԱՆԱՏԻՊ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի տարածքում, որտեղ առկա է ութ կամ ավելի հեռուստացույց, վերահեռարձակում կարող է իրականացվել միայն Հանձնաժողով ծանուցում ներկայացվելուց հետո: Օրենքի վերոնշյալ դրույթը ապահովելու նպատակով Հանձնաժողովն իրականացնում է շարունակական աշխատանքներ, որոնց արդյունքում ներկայացվել է 87 ծանուցում, այդ թվում 24-ը՝ 2019 թվականին:



ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

2019 թվականի հունիսի 27-ին Հանձնաժողովը հայտարարել է մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթ, սակայն 2019 թվականի դեկտեմբերի 30-ին այն հայտարարվել է չկայացած՝ սահմանված ժամկետում դիմումներ չներկայացվելու հիմքով: 2016 թվականից սկսած հայտարարվել է չորս մրցույթ, որոնք չեն կայացել դիմումների բացակայության պատճառով:

Անհրաժեշտ է արձանագրել, որ մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման համար օրենսդրությամբ սահմանված են ոչ գրավիչ պայմաններ, դրանք են՝ տարեկան պետական տուրքի բարձր՝ 100 միլիոն ՀՀ դրամ դրույքաչափը, պարտադիր սփռման տարածքի ոչ իրագործելի պահանջները և այլն, որոնք պոտենցիալ ներդրողների համար գրավիչ առաջարկներ չեն: Մասնավոր մուլտիպլեքսորի բացակայությունը նշանակում է հանրային թվային ցանցի օպերատորի մենաշնորհային դիրքի պահպանում, թվային հեռարձակման ոչ մրցակցային միջավայր: Դա նաև բացառում է նոր հեռարձակողների մուտքը եթերային թվային միջավայր: Հանձնաժողովը կարծում է, որ տեսալսողական ծառայությունների ոլորտը կարգավորող նոր օրենքում անհրաժեշտ է ամրագրել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան երկրորդ մուլտիպլեքսի շահագործումը:

Հանձնաժողովը 2019 թվականի նոյեմբերի 25-ին հայտարարել է թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային սփռման (ՀՀ Տավուշի մարզ) հեռուստածրագրի եթերային հեռարձակման լիցենզավորման արտահերթ մրցույթ:

Հարկ է արձանագրել, որ թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների արտահերթ մրցույթների արդյունքում տրամադրվող լիցենզիաների գործողության ժամկետի հետ կապված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի դրույթը ևս խնդրահարույց է. ըստ օրենքի վերոնշյալ լիցենզիաների գործողության ժամկետ է սահմանվում այն ամսաթիվը, որը նշված է ուժը կորցրած ճանաչված լիցենզիայում, և համաձայն օրենքի մեկ այլ դրույթի՝ հեռարձակման լիցենզիաները տրվում են տասը տարի ժամկետով, ուստի ստացվում է, որ ՀՀ Տավուշի մարզի տարածքում հեռարձակման համար հայտարարված մրցույթը կայանալու դեպքում տրամադրված լիցենզիան պետք է գործի մինչև 2021 թվականի հունվարի 20-ը՝ ընդամենը ութ ամիս: Օրենսդրական այս դրույթը նույնպես փոփոխության կարիք ունի:

7. ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթի շրջանակներում 2019 թվականի ընթացքում կատարել է հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ծրագրերի 1860 և տարածքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների 780 օրերի ուղղակի դիտարկումներ:

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ (ՕՐ)

	2018	2019
Հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ծրագրերի	2170	1860
Տարածքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների	1860	780

Հանձնաժողովը 2019 թվականի ընթացքում հեռուստառադիոընկերություններից պարբերաբար ստացել և ուսումնասիրել է վերջիններիս հաշվառման մատյանների տվյալները, վարել դրանց տեղեկատվական բազան, իրականացրել իր կողմից կատարվող ուղղակի դիտարկումների և ընկերությունների կողմից տրամադրվող տեղեկատվության համադրում, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի հեռարձակման օրինականությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն:

Հանձնաժողովը հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումն իրականացնում է ուղղակի դիտարկման, իսկ կաբելային (մալուխային) հեռուստառադիոհեռարձակման դեպքում նաև հեռուստառադիոընկերությունում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Հեռուստառադիոընկերություններում՝ տեղում դիտարկումներն իրականացվել են ինչպես ամբողջ տարվա համար կազմված հեռուստառադիոծրագրերի ցանկի և ժամանակացույցի համաձայն, այնպես էլ ըստ անհրաժեշտության՝ երբ տվյալ հեռուստառադիոընկերության նկատմամբ բողոք-գանգատ է ստացվել: Հաշվետու տարում ՀՀ բոլոր մարզեր կատարած 21 գործուղումների ընթացքում ուսումնասիրվել կամ մշտադիտարկման են ենթարկվել 61 հեռուստառադիոընկերություններ (կաբելային օպերատորներ): Արդյունքում՝ Հանձնաժողովի գործունեության ընթացքում, առաջին անգամ կազմվել է մարզային կազմակերպությունների «քարտեզը», ինչը թույլ է տվել ավելի արդյունավետ իրականացնելու վերահսկողական գործառույթները, արագ արձագանքելու հեռարձակողների խնդիրներին:

Իրականացված մշտադիտարկման արդյունքում Հանձնաժողովի կողմից՝ իր նախաձեռնությամբ, հարուցվել է 18 վարչական վարույթ, 15 հեռուստառադիոընկերության նկատմամբ կիրառվել է օրենսդրության պահանջները խախտելու համար պատասխանատվության միջոցներ:

Հանձնաժողովն ուսումնասիրությունների ընթացքում ևս մեկ անգամ կարող է արձանագրել, որ հաճախ հասարակությանը հետաքրքրող հարցերի քննարկման ժամանակ՝ լրատվական, հասարակական-քաղաքական և վերլուծական հաղորդումներում, չի ապահովվում բազմակողմանի և անաչառ տեղեկատվության ներկայացում՝ օգտագործվում են տարաբնույթ մանիպուլյատիվ հնարքներ: Մասնավորապես, նույն թեից կամ նույն կարծիքը պաշտպանող մասնակիցներ են հրավիրվում հաղորդմանը և արդյունքում՝ հանրությունը ականատես է լինում միակողմանի ներկայացված կամ քննարկվող հարցի աղավաղված պատկերի, որը Հանձնաժողովը դիտարկում է որպես մարդկանց անկողմնակալ և բազմակողմանի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտում:

Ուստի, Հանձնաժողովը կարևորում է օրենսդրության մեջ միջազգային ստանդարտներին, մասնավորապես, Եվրոպական միության դիրեկտիվներին համապատասխանող մի շարք դրույթների ամրագրումը, որոնք կապահովեն հավաստի տեղեկատվության սփռումը հեռարձակողների եթերում: Մասնավորապես, տեսալսողական մեդիածառայությունները պետք է ապահովեն՝

1. փաստերի և կարծիքների միջև հստակ տարբերությունը,

2. հավաստի՝ ստուգված, անկողմնակալ և բարեխիղճ, փաստի կամ իրադարձության մասին տեղեկացումը,

3. ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում, սեղմ ժամկետում միևնույն հաղորդման կամ այլ թողարկման ժամանակ այդ մասին իրազեկումը,

4. գաղտնի կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների կողմից տրամադրված տեղեկության վերաբերյալ իրազեկումը և այլն:

Ստորև ներկայացնում ենք 2019 թվականի ընթացքում միջին օրական հեռուստադիտումը՝ ըստ թիրախային խմբերի.

ՄԻՋԻՆ ՕՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՒՄԸ ԸՍՏ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ



8. ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

2019 թվականին հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքում, ինչպես նաև հեռուստառադիոընկերությունների կողմից հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները խախտելու հիմքով Հանձնաժողով

ներկայացված տեղեկությունների հիման վրա հայտնաբերված խախտումների վերաբերյալ հարուցվել է 22 վարչական վարույթ: Հաշվետու տարում կիրառվել են հետևյալ պատասխանատվության միջոցները՝ 10 հեռուստաընկերության և 1 ռադիոընկերության նկատմամբ կիրառվել է տուգանք, իսկ 4 հեռուստաընկերության նկատմամբ կիրառվել է գրավոր նախազգուշացում: Օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումներ չարձանագրելու կամ խախտումները վերացնելու հիմքով հարուցված վարչական վարույթներից 7-ը կարճվել են:

2018 և 2019 թվականներին իրականացված վարչական վարույթների համեմատական վերլուծությունից գալիս ենք այն եզրահանգման, որ վարույթների քանակը կրկնակի ավելացել է, ընդ որում, եթե 2018 թվականին դիմումների հիման վրա հարուցված վարույթների քանակը 7-ն է, իսկ Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվածը՝ 4-ը, ապա 2019 թվականին պատկերը լրիվ այլ է՝ դիմումների հիման վրա հարուցված վարույթների քանակը 4-ն է, իսկ Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվածը՝ 18-ը:



Արձանագրված խախտումների աճը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ և առաջ օրենսդրական փոփոխություններով պայմանավորված Հանձնաժողովը 2018 թվականին սահմանել էր էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն

ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները: Սահմանելով չափորոշիչները՝ Հանձնաժողովը խստագույնս վերահսկում է, որպեսզի հեռուստառադիոընկերությունների կողմից պահպանվեն չափորոշիչներով սահմանված պահանջները: Այս համատեքստում Հանձնաժողովը կարևորում է անչափահասների իրավունքների, շահերի, անվտանգության պաշտպանությունը, քանի որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օժանդակության իրավունք, իսկ հեռուստառադիոընկերությունների դերը այս հարցում կարևոր է և առանցքային:

Հանձնաժողովը հիմք ընդունելով սահմանված չափորոշիչները՝ 2 հեռուստաընկերության նկատմամբ կիրառել է տուգանք, որոնցից մեկը վերաբերում է կրոնական բնույթի հաղորդման ընթացքում խտրականության և ատելության խոսքի քարոզ իրականացնելուն, իսկ մյուսը՝ հեռուստասերիալի ընթացքում ակնհայտ բռնության, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական և հոգևոր ցավ պատճառելու տեսարաններ ցուցադրելուն:

Հանձնաժողովը հեռուստառադիոընկերությունների գործունեության նկատմամբ իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս 4 հեռուստաընկերության նկատմամբ հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի օրենսդրության խախտման համար կիրառել է գրավոր նախազգուշացում, որից հետո 2 հեռուստաընկերության նկատմամբ նույն խախտումը կրկնելու հիմքով կիրառվել է նաև տուգանք:

Հանձնաժողովը, որպես հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմին, վերահսկողություն է իրականացնում նաև հեռուստառադիոընկերությունների կողմից գովազդի հեռարձակման նկատմամբ և հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրել է գովազդի մասին օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների խախտումներ և 1 ռադիոընկերության նկատմամբ կիրառել տուգանք:

Հանձնաժողովը կարևորում է հանրային շահին հակասող գովազդային տեղեկատվության տարածման սահմանափակումը: Հանրային առողջության պահպանմանն ուղղված «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումները չպահպանելու համար 5 հեռուստաընկերության նկատմամբ կիրառվել է տուգանք՝ արգելված ժամանակահատվածում

թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) խմիչքի և ծխախոտի և ծխախոտային արտադրության գովազդ հեռարձակելու համար, իսկ 1 հեռուստաընկերության նկատմամբ՝ նույն խախտումն իրականացնելու համար կիրառվել է կրկնակի տուգանք:

Հանձնաժողովի կողմից ընդունված վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջով 5 հեռուստառադիոընկերություններ դիմել են դատարան, որոնց հայցերը գտնվում են ՀՀ վարչական դատարանի վարույթում:

Հանձնաժողովի հայցի հիման վրա՝ 2019 թվականի դատարանի վճռով, ուժը կորցրած է ճանաչվել թվային ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնող «Տավուշ-ՏՎ» ՍՊ ընկերության հեռարձակման լիցենզիան:

9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը երկկողմանի և բազմակողմանի ձևաչափով շարունակել է համագործակցել մի շարք երկրների մեդիակարգավորող մարմինների և միջազգային կազմակերպությունների ու հարթակների հետ՝ ուսումնասիրելով ոլորտի օրենսդրությունը, կիրառման մեխանիզմները, կարգավորման առաջատար փորձը: Հանձնաժողովը հանդիսանում է կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրների կարգավորող մարմինների ֆորումի (BRAF) անդամ, ինչպես նաև կնքված երկկողմ պայմանագրերի և հուշագրերի շրջանակներում համագործակցում է Իրանի, Մոլդովայի, Չեխիայի, Իտալիայի կարգավորող մարմինների հետ: 2019 թվականին Հանձնաժողովի պատվիրակությունները մասնակցել են EPRA-ի գարնանային և աշնանային նստաշրջաններին, ներկայացրել՝ ծրագրերի և առաջարկվող հայեցակարգերի վերաբերյալ Հանձնաժողովի դիրքորոշումներն ու առաջարկությունները: 2019 թվականի հոկտեմբերից Հանձնաժողովն հանդիսանում է Կենտրոնական Եվրոպայի կարգավորող ֆորումի (CERF) անդամ: Բանակցություններ են տարվում Միջերկրածովյան Կարգավորող մարմինների հարթակի (MNRA) լիիրավ անդամ դառնալու ուղղությամբ:

Հանձնաժողովի ներկայացուցիչը հանդիսանալով հաճախությունների հարցերով աշխատանքային խմբի (Spectrum Experts Working Group (SEWG)) անդամ, հաշվետու տարում Մոլդովայում կայացած համաժողովին ներկայացրել է Հանձնաժողովը, որտեղ քննարկվել են 470-694ՄՀց, 700 ՄՀց և 800ՄՀց հաճախությունների ազատականացումից հետո՝ թվային հեռուստատեսության սպեկտորի վերապլանավորման սկզբունքները, ներկայացվել են 5G և թվային հեռուստատեսության վերաբերյալ անդամ երկրներում կատարված աշխատանքները, քննարկվել՝ թվային հեռուստատեսության զարգացման ուղիները:

2019 թվականին սկիզբ է դրվել ԵԱՏՄ անդամ երկրների կարգավորող մարմինների հետ փոխգործակցության գործընթացին: Հայկական կողմի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի նախագահն աշխատանքային այցեր է կատարել Մոսկվա և Մինսկ, հանդիպումներ ունեցել ՌԴ «Ռոսկոմնադզոր» դաշնային ծառայության և Բելառուսի տեղեկատվության նախարարության ղեկավար կազմի հետ: Երկու պետական հաստատությունների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել կնքել երկկողմանի համաձայնագրեր, որոնց իրագործումը թույլ կտա պաշտպանելու ազգային հեռարձակողների արտադրանքի հեղինակային իրավունքը գործընկեր երկրներում, փոխշահավետ լուծումներ գտնելու գործընկեր երկրների հեռուստածրագրերի հեռարձակման համար կաբելային ցանցերում, կազմակերպելու փորձի փոխանակում հեռարձակման տեխնիկական ստանդարտների, օրենսդրության, թվային գրագիտության, ատելության խոսքի սահմանափակման, կազմակերպելու համատեղ կոնֆերանսներ, դասընթացներ և այլն:

Հաշվետու տարվա ընթացքում հանդիպումներ ու քննարկումներ են կայացել Ուկրաինայի և Իտալիայի կարգավորող մարմինների անդամների հետ: Արդյունքում՝ 2019 թվականի դեկտեմբերին Հանձնաժողովի աշխատակազմի պատասխանատուները մեկնել են Ուկրաինա, ծանոթանացել Ուկրաինայի հեռուստատեսության և ռադիոյի ազգային ռադայի գործունեությանը, հեռարձակումը կարգավորող օրենսդրությանը: Իսկ Իտալիայի կարգավորող մարմնի հետ ձեռք է բերվել 2020-2021 թթ. ընթացքում աշխատանքային ծրագրեր իրականացնելու պայմանավորվածություն:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովն ակտիվ աշխատել է Եվրոպայի Միության, Եվրոպայի Խորհրդի, ԵԱՀԿ-ի, ԱՄՆ «Գլոբալ մեդիա» (որը համակարգում է «Ամերիկայի ձայն», «Ազատություն», «Current time» և այլ մեդիահարթակների աշխատանքները) և այլ պատասխանատու անձանց հետ՝ ոլորտային խնդիրների լուծման ուղղությամբ: Հանձնաժողովի

անդամներն ու աշխատակազմը ակտիվ մասնակցել և բանախոսել են միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված կոնֆերանսներին, սեմինարներին:

10. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ՄՈՒՏՔԵՐ

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները պետական տուրքի գծով հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե մուտքագրված 29 685 982 ՀՀ դրամ գումարը ապահովել են հեռուստառադիոծրագրերի հեռարձակման համար տարեկան պետական տուրքի, սահմանված ժամկետում չվճարված տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժի, ինչպես նաև լիցենզիաների վերաձևակերպումների համար գանձված գումարների հաշվին:

Հաշվետու տարում Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների արդյունքում հեռուստառադիոընկերությունների նկատմամբ իրավախախտումների համար կիրառված տուգանքը կազմել է 5 200 000 ՀՀ դրամ, որից 2019 թվականին ՀՀ պետական բյուջե փաստացի փոխանցված գումարը կազմել է 3 400 000 ՀՀ դրամ:

11. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՅԼ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով: 2019 թվականի ընթացքում Հանձնաժողովը գումարել է 34 նիստ, ընդունվել է 157 որոշում՝ 2 նորմատիվ և 155 անհատական:

Ստորև ներկայացվում է 2018 և 2019 թվականներին Հանձնաժողովի կողմից կազմակերպված նիստերի և որոշումների տվյալները.

		2018	2019
ՆԻՍՏ		36	34
ՈՐՈՇՈՒՄ	Նորմատիվ	3	2
	Անհատական	107	155
	Ներքին	2	-

Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորվող բնագավառի իրավական դաշտի կատարելագործումը շարունակական գործընթաց է և Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը: Հանձնաժողովն իրավական ոլորտի կարգավորման կատարելագործման գործընթացում հաշվետու տարում հետամուտ է եղել օրենքների դրույթների կիրարկման ապահովման նպատակով նորմատիվ իրավական ակտերի մշակման և իր կողմից ընդունված գործող նորմատիվ իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացման աշխատանքներին:

Հանձնաժողովն հաշվետու տարում սահմանել է հետևյալ իրավական ակտերը.

- «Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից եթերաժամանակ հատկացնելու կարգը և պայմանները սահմանելու մասին»,
- «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին»,
- «էրոտիկ բնույթի, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» որոշման չափորոշիչները սահմանելու մասին»,

- «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթների կիրառման վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրվել է պաշտոնական պարզաբանում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու տարում Հանձնաժողով մուտքագրվել է 667 գրություն, քաղաքացիներից և կազմակերպություններից՝ 40 դիմում-բողոք (մասնավորապես՝ հեռուստաընկերությունների հաղորդումների անորակ լինելու, անբարեխիղճ գովազդ հեռարձակելու, վարչական վարույթ հարուցելու, հեղինակային իրավունքի խախտման մասին) որոնց պատասխան է տրվել համաձայն գործող օրենսդրական ակտերի:

Ստորև ներկայացվում է 2018 և 2019 թվականներին Հանձնաժողով մուտքագրված գրությունների, այդ թվում դիմում-բողոքների տվյալները: Համեմատական վերլուծությունից երևում է, որ չնայած 2019 թվականին գրությունների թիվը ավելացել է 63-ով, բայց քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված դիմում-բողոքների թիվը ոչ թե ավելացել, այլ պակասել է 2-ով:

	2018	2019
Գրություն	604	667
Դիմում-բողոք	42	40

Հանձնաժողովն դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ օրենքների, որոշումների, միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի նախագծերի վերաբերյալ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու տարում օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ նոր հաստատված մեթոդաբանությամբ գնահատվել և նոր չափանիշներով դասակարգվել են Հանձնաժովի քաղաքացիական ծառայության 35 պաշտոններ և հաստատվել է քաղաքացիական ծառայության պաշտոնների նոր անվանացանկն ու քաղաքացիական ծառայության պաշտոնների

անձնագրերը: Աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում կատարվել են փոփոխություններ՝ կրճատվել են Հանձնաժողովի քարտուղարության 2 փաստաթղթավարների հաստիքները, իսկ իրավաբանական և լիցենզավորման վարչությունը համալրվել է մասնագետների 2 նոր հաստիքներով:

Հանձնաժողովի 28 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են՝ մասնակցելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպված «Բարեվարքության հարցերով կազմակերպիչներին անհրաժեշտ հմտություններ», «Էթիկայի հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ հմտություններ», «Մրցույթի հարցազրույցի փուլը վարելու համար հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ հմտություններ», «Ծառայողական քննությունը որպես քաղաքացիական ծառայության արդյունավետության բարձրացման բաղադրիչ», «Տեղեկության հավաքագրում և վերլուծություն», «Հաշվետվությունների մշակում», «Խնդրի լուծում» թեմաներով դասընթացներին: 5 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են մասնակցելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «Ծրագրային բյուջետավորում» թեմայով դասընթացներին:

Հանձնաժողովում ժամանակավոր թափուր պաշտոնների համար կնքվել են 5 ժամկետային աշխատանքային պայմանագրեր, որոնց մասին հայտարարությունները հրապարակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Նոր մեթոդաբանությամբ գնահատված և դասակարգված Հանձնաժողովի թափուր քաղաքացիական ծառայության պաշտոնների մրցույթները կազմակերպելու համար կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, մշակվել են հարցաշարեր թեստավորման և հարցազրույցի փուլերի համար, հաստատվել՝ Հանձնաժողովի հայեցողական պաշտոնների՝ Հանձնաժողովի նախագահի խորհրդականի և օգնականների անձնագրերը:

12. Հանրային հեռարձակող

Իշխանական կամ կոմերցիոն վերահսկողությունից դուրս գործող Հանրային հեռարձակման էությունը կայանում է հանրային ծառայության գործառույթների իրականացման մեջ: Ուստի, հանրային հեռուստառադիոընկերության գործունեության գնահատականի կարևոր չափորոշիչներն են խմբագրական ազատությունն ու անկախությունը, մատչելիությունը, ճնշման և պարտադրանքի գործիք չհանդիսացող ֆինանսավորումը, տեղեկատվության օբյեկտիվությունը, տեսակետների բազմազանությունը, սոցիալական ինտեգրացումը, կրթությունը, վստահելիությունը, հաշվետվողականությունը:

2019 թվականին նշանակալի փոփոխություններ են կատարվել Հանրային հեռուստառադիոընկերությունում: Ապրիլին մրցույթով ընտրվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահը, Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենը, կադրային և կառուցվածքային փոփոխություններ են կատարվել Հանրայինի ամբողջ համակարգում: Այդ փոփոխությունները, ինչպես նաև մեդիաոլորտի ազատության և անկախության վերաբերյալ իշխանությունների հռչակված սկզբունքները, հանրության կողմից պահանջների խստացումը, վերահսկողությունը, քննադատությունը դրական ազդեցություն են թողել Հանրայինի խմբագրական քաղաքականության վրա, ընդլայնելով ազատ գործելու հնարավորությունները, բարձրացել է հաղորդումների որակը, բազմազանությունն ու բազմակարծությունը, հետևաբար վստահությունն ու դիտելիությունը:

Հանրային հեռուստաընկերություն

2019 թվականին Հանրային հեռուստատեսության «1-ին ալիք» ընդհանուր ուղվածության և «Շողակաթ» հոգևոր-մշակութային ուղղվածության հեռուստածրագրերը արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իրենց կանոնադրություններով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

«1-ին ալիք»-ը պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ թվային մուլտիպլեքսով ՀՀ տարածքում և Արցախում և արբանյակով՝ ՀՀ տարածքում և տարածքից դուրս, օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում և սահմանված

պահանջներին համապատասխան պատրաստել և հեռարձակել է օրական մինչև 10 ժամ տևողությամբ տարբեր թեմատիկ ուղղություններով սեփական արտադրության հաղորդումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բավարարելու հանրության տարբեր շերտերի և սոցիալական խմբերի պահանջմունքները, ապահովելով տեղեկացված լինելու նրանց սահմանադրական իրավունքը: 2019 թվականի ընթացքում Առաջին և միջազգային ալիքներից յուրաքանչյուրի եթերում հեռարձակվել են 8 748 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների: Բոլոր թեմատիկ ուղղություններով ավելացել են հաղորդումների ծավալները:

2019 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից
հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)	Միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	851.7	1 149.3
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1 962.8	2 073.9
3	Մշակութային	1 671.8.	1 340.7
4	Կրթական, մանկապատանեկան	614.9	410.1
5	Գիտաճանաչողական, հայոց լեզվի և պատմության	749.3	964.8
6	Մարզական	185.1	79.1
7	Երաժշտական	704.6	720.6
8	Զվարճալի-ժամանցային	1 697.4	1 847.1

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)	Միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	310.5	162.5
	Ընդամենը	**8 748.1**	**8 748.1**

Քանի որ Հանրային հեռուստատեսության գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվությանը կարելի է ծանոթանալ ընկերության պաշտոնական կայքում, ապա Հանձնաժողովը հակիրճ ներկայացնում է հեռուստատեսությունում կատարված աշխատանքների գնահատականը:

Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ «1-ին ալիք»-ի հեռուստալսարանը սկսել է հավասարապես բաժանված լինել ըստ յուրաքանչյուր տարիքային խմբի, քանի որ եթերում առկա են թե մանկապատանեկան հաղորդումներ, թե սոցիալ-քաղաքական ու լրատվական, և թե ժամանցային հաղորդումներ ու ֆիմեր: Հատկանշական է նաև, որ Առաջինի լսարանի բավականին մեծ մաս են կազմում (23%) բարձրագույն կրթություն ունեցողները, որոնք ավանդաբար համարվում են հեռուստատեսությունը առավել քիչ նախընտրող խումբ:

Հանձնաժողովի կողմից իրականացվող բովանդակության պարբերական մշտադիտարկումները թույլ են տալիս արձանագրել, որ «1-ին ալիք»-ը հիմնականում ապահովել է քաղաքական, տնտեսական, սոցիալական խնդիրների վերաբերյալ տարբեր տեսակետների ներկայացումը լրատվական թողարկումներում և հասարակական-քաղաքական հաղորդումներում ու հարցազրույցներում:

Ավելացնելով լրատվական հաղորդումների հաճախականությունը՝ «1-ին ալիք»-ը բարձրացրել է լրատվական հաղորդումների դիտողականությունն ու վստահելիությունը: 2019 թվականի սեպտեմբերից «1-ին ալիք»-ի եթերում լրատվական հաղրդումները հեռարձակվում են յուրաքանչյուր 2 ժամը մեկ: Բացի այդ, գործարկվել է www.1lurer.am լրատվական կայքը, ինչի

շնորհիվ «1-ին ալիք»-ի հեռուստադիտողը հնարավորություն ունի լրատվություն ստանալ 24/7 ռեժիմով:

Հանձնաժողովը «1-ին ալիք»-ի աշխատանքներում օրենսդրական էական խախտումներ չի արձանագրել: Հաշվետու տարում հարուցվել է մեկ վարչական վարույթ «Գովազդի մասին» օրենքի դրույթները խախտելու համար՝ Հանրային հեռուստաընկերությունը տուգանվել է: Հանձնաժողովը դիմում-բողոքներ չի ստացել հանրային հեռուստաընկերության խմբագրական քաղաքականությանը միջամտելու, տեղեկատվությունը ազատ պատրաստելու և տարածելու խոչնդոտների վերաբերյալ:

2019 թվականին Հանրային հեռարձակողի «Շողակաթ» հոգևոր-մշակութային ուղղվածության հեռուստաալիքը պատրաստել և հեռարձակել է 6 570 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ, որոնք ներկայացրել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը: «Շողակաթ»-ի հաղորդումներով ու հաղորդաշարերով հաճախ է ներկայացվում Հայ Առաքելական Եկեղեցու բացառիկ դերը հայկական մշակույթի, ազգային ավանդույթների ձևավորման, պահպանման գործում:

Հանրային ռադիոընկերություն

2019 թվականին «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունը կատարել է ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման իր գործառույթները՝ օրական հեռարձակելով հաղորդումներ հետևյալ ծավալներով. «Առաջին ծրագիր» ռադիոալիք՝ 24 ժամ, «Իմ ռադիո» երաժշտական-երիտասարդական ռադիոալիք՝ 24 ժամ, «ՎԵՄ» հոգևոր-մշակութային ռադիոալիք՝ 24 ժամ, Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում բնակվող ազգային փոքրամասնությունների համար պատրաստվող օտարալեզու հաղորդումներ՝ օրական 3 ժամ 15 րոպե:

Քանի որ Հանրային ռադիոյի գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվությանը կարելի է ծանոթանալ ընկերության պաշտոնական կայքում, ապա Հանձնաժողովը հակիրճ ներկայացնում է ռադիոյում կատարված աշխատանքների գնահատականը:

Ռադիոընկերությունը իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք միտված են եղել երկրի տեղեկատվական անվտանգության խնդիրների լուծմանը: Շեշտակի մեծացվել է Թուրքիայի հետ սահմանային գոտում FM հեռարձակման հզորությունը, հզորացվել է Շիրակի մարզը սպասարկող

հիմնական հաղորդիչ կայանը, տեղադրվել են նոր հաղորդակ և ալեցիր, ինչի արդյունքում հեռարձակման որակն էականորեն բարելավվել է: Շեշտակի ավելացել է Ադրբեջանում, Թուրքիայում և Իրանում AM հաճախականություններով հեռարձակվող ռադիոհաղորդումների սփռման գոտին: Կարգաբերվել է արտասահմանյան երկրների համար տրվող հաղորդումների միջին ալիքային հեռարձակումը, ինչի արդյունքում ադրբեջաներեն, թուրքերեն, պարսկերեն, քրդերեն և արաբերեն հաղորդումները AM1395 հաճախությամբ բավարար որակով հասանելի են վերը նշված երկրներում: Ադրբեջանական լսարանի համար ներդրվել են նոր տեսապրոդուկտներ, հայկական ռադիոն՝ լսելուց բացի Ադրբեջանում կարող են նաև դիտել:

Հաշվետու տարում ռադիոընկերությունը սկսել է արդյունավետ օգտագործել ծրագրերի սփռման նոր մեդիահարթակներ: 2019 թվականին գործարկված Հանրային ռադիոյի նոր կայքը դարձել է Հայաստանի ամենաբազմալեզու հարթակը, այն հայերենից բացի հասանելի է 11 լեզուներով՝ ազգային փոքրամասնությունների, միջազգային հաղորդակցության և տարածաշրջանի երկրների: Կայքի դիտելիությունը գրեթե եռապատկվել է: Հավելյալ տեխնիկական սարքավորում է տեղադրվել ռադիոյի 3 տաղավարում, արդյունքում վիզուալացվել են ռադիոհաղորդումները, որոնք ոչ միայն լսելի են, այլև դիտելի համացանցում: 2019 թվականին վերագործարկվել է ռադիոընկերության 2-րդ՝ «Իմ ռադիո» երիտասարդական ալիքը: Նախկինում այն կոմերցիոն նկատառումներից ելնելով հեռարձակում էր միայն երաժշտություն և գովազդ, իսկ այժմ սկսել է հեռարձակել իր թեմատիկ ուղվածությանն համապատասխանող բովանդակություն:

Հանձնաժողովը Հանրային ռադիոընկերության աշխատանքներում օրենսդրական խախտումներ չի արձանագրել, վարչական վարույթներ չի իրականացրել: Հանձնաժողովը դիմում-բողոքներ չի ստացել հանրային ռադիոընկերության խմբագրական քաղաքականությանը միջամտելու, տեղեկատվությունը ազատ պատրաստելու և տարածելու վերաբերյալ:

Հավելված 1

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2019 թվականի տարեկան հաղորդման

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՐԱՆԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՍՈՑԻԱԼ - ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

2019

ԹԻՐԱԽՑԻՆ ԽՈՒՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆ 4+

44.5% ՏՂԱՄԱՐԴ	55.5% ԿԻՆ	
191	227	*Միջին օրական հեռուստադիտումը (րոպե)*
ԱՇԽԱՏՈՂ 45.1%		
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ 3.8%		
ԴՊՐՈՑԱԿԱՆ,ՈՒՍԱՆՈՂ 20.1%		
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ 12.6%		*Սոցիալական կարգավիճակը*
ԳՈՐԾԱԶՈՒՐԿ 7.8%		
ԹՈՇԱԿԱՌՈՒ 10.5%		
ՉՈՒՆԵՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ[1] 8.0%		
ՏԱՐՐԱԿԱՆ 14.2%		
ՄԻՋՆԱԿԱՐԳ 30.4%		
ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ 19. 8%		*Կրթություն*
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ 27.6%		

[1]Երեխաներ մինչև 6 տարեկան, մեծահասակներ, որոնք հիվանդության կամ այլ պատճառներով չեն ստացել տարրական կրթություն

Source: Admosphere - Armenia

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2019

Համապատասխանության ինդեքսը (AFF) *փաստում է, որ հեռարձակումների ընդհանուր հեռուստադիտողների թվում գերակշռում են նպատակային լսարանի ներկայացուցիչները (նորման համարվում է 100 %):*

$$AFF = \frac{Rating\ \%\ (\text{Նպատակային լսարան})}{Rating\ \%\ (\text{Ընդհանուր լսարան})} * 100\ \%$$



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐ

2019

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆ 4+

1/1/2019 – 12/31/2019		06 – 06		
		Armenia All4+		
Period	Selected channel	Rating	Rating 000	Share
year 2019	OTHER TV [1]	4.5	77.608	31.0
	ArmeniaTV	2.8	48.420	19.34
	Shant	2.4	40.722	16.27
	APTV(H1)	0.9	16.149	6.45
	ATV	0.9	14.902	5.95
	Kentron TV	0.7	11.612	4.64
	h2	0.4	7.576	3.03
	Armnews	0.4	6.020	2.40
	Erkir Media	0.3	4.721	1.89
	First Russian Channel	0.2	4.031	1.61
	AR	0.2	3.933	1.57
	RTR – Planeta	0.2	3.863	1.54
	Shoghakat TV	0.2	2.646	1.06
	5 TV [2]	0.1	1.862	0.74
	TV21	0.1	1.672	0.67
	Nor Hayastan	0.2	2.718	1.09
	MIR	0.1	1.397	0.56
	Kultura	0.0	0.436	0.17
	CNN	0.0	0.029	0.01

ԿԻՐԱՌՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Rating (AMR) – Վարկանիշ՝ նպատակային լսարանից առանձնացված մարդկանց միջին թիվն է, որը դիտարկվող ժամանակահատվածում դիտել է կոնկրետ հեռուստաընկերության հաղորդումները:Կարելի է հաշվել, թե՝ բացարձակ, թե՝ հարաբերական թվերով:

$$\text{AMR} = \frac{\sum_{k=1}^{n} \text{AMR n}}{\text{Program Duration}}$$

Share (SHR) –Մասնաբաժին՝ ցույց է տալիս, թե հեռուստացույցի մոտ գտնվող նպատակային լսարանի ո՞ր մասն է նախընտրել կոնկրետ հեռուստաընկերության հաղորդումները դիտարկվող ժամանակահատվածում: Դիտարկվող ժամանակահատվածում, բոլոր հեռուստաընկերությունների մասնաբաժինը կազմում է 100%:

$$SHR\% = \frac{AMR}{TVR} * 100$$

OTHER TV [1] - ներկայացնում է ՀՀ –ում հեռարձակվող բոլոր մարզային և մալուխային հեռուստածրագրերը

5 TV [2] * - 2019 թ. հունիսի 14-ից մինչև դեկտեմբերի 31-ը տվյալները բացակայում են, եղել է տեխնիկական խոտան հեռուստաընկերությունում

Source: Admosphere - Armenia

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՌՈՒՏԱՍԾՐԱԳՐԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
2019

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆ 4+



Source: Admosphere - Armenia

ՀԵՌՈՒՏԱՏԵՍԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ
2019

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆ 4+



Ծածկույթ (Reach) - կուտակային լսարան.
Թիրախային խմբից ընտրված մարդիկ, որոնք դիտել են հաղորդումը առնվազն 1 րոպե:

Օրինակում ներկայացված է հեռուստաընկերությունների լսարանների կուտակումը՝ օրական, շաբաթական, ամսական և տարեկան:

Source: Admosphere - Armenia



Source: Admosphere - Armenia

Հավելված 2

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2019 թվականի տարեկան հաղորդման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/Հ	Ընկերության անվանումը, հեռուստածրագրի անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ		
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆ» ՓԲԸ «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	-
2	«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՇՈՂԱԿԱԹ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	-
3	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ «ԿԵՆՏՐՈՆ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 151 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ «h2» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 152 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 157 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ «ԱՐՄԵՆԻԱ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 163 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 164 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«ԱՆՄՎԵՐ» ՍՊԸ «ԷՌ ՏԷ ԷՌ ՊԼԱՆԵՏԱ» (РТР планета) ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 171 28.01.2011թ. 20.01.2021թ.
	Ք. ԵՐԵՎԱՆ		
1	«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ «ՄԻՐ» ՀԾ	ք. Երևան	–

2	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱՐ» ՀԾ	ք. Երևան	N 148 20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ «ԱՐՄՆՅՈՒՋ» ՀԾ	ք. Երևան	N 153 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԾ	ք. Երևան	N 156 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՐԿ» ՍՊԸ «5-ՐԴ ԱԼԻՔ» ՀԾ	ք. Երևան	N 160 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «21 TV» ՀԾ	ք. Երևան	N 161 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ «ՍԻ ԷՆ ԷՆ» (CNN) ՀԾ	ք. Երևան	N 162 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ «Ա-ԹԻՎԻ» ՀԾ	ք. Երևան	N 166 20.01.2011թ. 20.01.2021թ.
9	«ԱԴՎԵՐՏԱ» ՍՊԸ «ՊԵՐՎԻՅ ԿԱՆԱԼ» (Первый канал) ՀԾ	ք. Երևան	N 170 28.01.2011թ. 20.01.2021թ.
10	«ՊԱՐԱԴԻԶ» ՍՊԸ «ՌՈՍԻԱ Կ» (Россия К) ՀԾ	ք. Երևան	N 172 28.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
–	–	–	–
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ «ԱՐԱՐԱՏ» ՀԾ	ՀՀ Արարատի մարզ	N 168 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ «ԼՈՒՅՍ» ՀԾ	ՀՀ Արմավիրի մարզ	N 158 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ «ԱՎԵՏԻՍ» ՀԾ	ք. Էջմիածին	N 43 * 12.04.2002 թ.-
3	«ԹԵՎ» ՍՊԸ «ՆՈՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԾ	ք. Արմավիր	N 47 * 18.04.2002 թ.-
4	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱԼՏ» ՀԾ	ք. Արմավիր	N 49 * 18.04.2002 թ.-

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ «ԳԵՂԱՄԱ» ՀԾ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 149 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ «ՖՈՐՏՈՒՆԱ» ՀԾ	ՀՀ Լոռու մարզ	N 150 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ «ՎԱՆԱՁՈՐ» ՀԾ	ք. Վանաձոր	N 48 * 18.04.2002 թ.-
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ՄԻԳ» ՀԾ	ք. Վանաձոր	N 58 * 03.07.2002 թ.-
4	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ «ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՀԾ	ք. Ալավերդի	N 79 * 25.10.2003 թ.-
5	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ «ԼՈՌԻ» ՀԾ	ք. Վանաձոր	N 83 * 01.11.2003 թ.-
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ «ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՀԾ	ՀՀ Կոտայքի մարզ	N 154 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ «ՀՐԱԶԴԱՆ ԹԻ-ՎԻ» ՀԾ	ք. Հրազդան	N 89 * 12.01.2004 թ.-
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ՑԱՅԳ» ՍՊԸ «ՑԱՅԳ» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	N 165 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ «ԳԱԼԱ» ՀԾ	ք. Գյումրի	N 98 23.02.2005թ.-[1]
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԶԱԳԵԶՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ «ԶԱՆԳԵԶՈՒՐ ՏՎ» ՀԾ	ՀՀ Սյունիքի մարզ	N 169 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			

[1] Նշված լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև յուրաքանչյուր լիցենզիայով սահմանված սփռման տարածքը ներառող մարզում թվային հեռարձակման նոր մրցույթի անցկացումը և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելը:

–	–	–	–
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
–	–	–	–

Հավելված 3

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2019 թվականի տարեկան հաղորդման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հ/հ	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը
Ք. ԵՐԵՎԱՆ ԵՎ ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 144 23.10.2010թ. 23.10.2020թ.
2	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 186 16.10.2012թ. 16.10.2022թ.
3	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 187 06.11.2012թ. 06.11.2022թ.
4	«ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ, Վայոց ձորի մարզ	N 202 01.04.2015թ. 01.04.2025թ.
5	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	N 205 16.09.2015թ. 16.09.2025թ.
6	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 208 24.11.2015թ. 24.11.2025թ.
7	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 211 23.03.2016թ. 23.03.2026թ.
8	«ՇԱՆԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 216 30.12.2016թ. 30.12.2026թ.

9	«ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 218 14.01.2017թ. 14.01.2027թ.
10	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Տավուշի մարզ, Սյունիքի մարզ	N 228 03.10.2017թ. 03.10.2027թ.
11	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի մարզ, Լոռու մարզ	N 229 03.10.2017թ. 03.10.2027թ.
12	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 252 22.12.2017թ. 22.12.2027թ.
13	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզեր	N 253 23.12.2017թ. 23.12.2027թ.
14	«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի մարզեր	N 255 10.04.2018թ. 10.04.2028թ.
15	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի, Տավուշի մարզեր	N 257 05.05.2018թ. 05.05.2028թ.
16	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 262 04.12.2018թ. 04.12.2028թ.
17	«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 263 02.02.2019թ. 02.02.2029թ.
18	«ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Գեղարքունիքի մարզ	ԿՀ N 269 28.08.2019թ. 28.08.2029թ.
19	«ՅՈՏԱ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի մարզեր	ԿՀ N 272 08.10.2019թ. 08.10.2029թ.
20	«ՇԱՐԿ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 273 06.11.2019թ. 06.11.2029թ.
21	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզեր	ԿՀ N 274 11.12.2019թ. 11.12.2029թ.
Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	ք. Երևան	N 137 20.03.2010թ. 20.03.2020թ.

2	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N 140 26.05.2010թ. 26.05.2020թ.
3	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 146 23.12.2010թ. 23.12.2020թ.
4	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 174 10.06.2011թ. 10.06.2021թ.
5	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 184 15.06.2012թ. 15.06.2022թ.
6	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան	N 185 16.06.2012 թ. 16.06.2022 թ.
7	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	N 203 07.07.2015 թ. 07.07.2025 թ.
8	«ՄԵԴԻԱ ՔՈՆԹԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 249 17.11.2017թ. 17.11.2027թ.
9	«ՖԱՎՈՐԻՏ ԹԻ ՎԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան	ԿՀ N 267 10.07.2019թ. 10.07.2029թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	N 194 11.01.2014թ. 11.01.2024թ.
2	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	N 248 16.11.2017թ. 16.11.2027թ.
3	«ԿՈԼՄԵՆԱ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Տավուշի մարզ	N 251 15.12.2017թ. 15.12.2027թ.
4	«ԴԻԶԻ ԹՎ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, Կոտայքի մարզ	N 258 06.05.2018թ. 06.05.2028թ.
5	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Տավուշի մարզեր	ԿՀ N 270 17.09.2019թ. 17.09.2029թ.
6	«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր	ԿՀ N 271 08.10.2019թ. 08.10.2029թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
1	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	N 147 23.12.2010թ. 23.12.2020թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	N 183 22.05.2012թ. 22.05.2022թ.
2	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Վեդի, ք. Արարատ	N 181 31.01.2012թ. 31.01.2022թ.
3	«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	ք. Մասիս	N 207 09.11.2015թ. 09.11.2025թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՀԱՌԻԶ ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	N 221 29.07.2017թ. 29.07.2027թ.
2	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր	N 250 21.11.2017թ. 21.11.2027թ.
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 189 28.12.2012թ. 28.12.2022թ.
2	«ՊԼԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 219 04.07.2017թ. 04.07.2027թ.
3	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սևան	N 226 28.09.2017թ. 28.09.2027թ.
4	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	ԿՀ N 265 09.04.2019թ. 09.04.2029թ.
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր	N145 23.12.2010թ. 23.12.2020թ.
2	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	N 206 09.11.2015թ. 09.11.2025թ.
3	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 212 05.04.2016թ. 05.04.2026թ.
4	«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	ԿՀ N 259 20.07.2018թ. 20.07.2028թ.
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			

1	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ք. Եղվարդ	N 177 04.08.2011թ. 04.08.2021թ.
2	«ՍՄԱՅԼ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 198 06.09.2014 թ. 06.09.2024 թ.
3	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ք. Նոր Հաճըն	N 214 09.07.2016թ. 09.07.2026թ.
4	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 220 25.07.2017թ. 25.07.2027թ.
5	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	N 223 03.08.2017թ. 03.08.2027թ.
6	«ՔԱՆԹՐԻՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 254 18.01.2018թ. 18.01.2028թ.
7	«ՖԼԱՅՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 256 05.05.2018թ. 05.05.2028թ.
8	«ՌԱԶՆԵՏԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 264 21.02.2019թ. 21.02.2029թ.
9	«ԱՐՄՔՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 266 18.06.2019թ. 18.06.2029թ.
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	N 182 18.05.2012թ. 18.05.2022թ.
2	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Գյումրի, ք. Արթիկ	N 175 09.07.2011թ. 09.07.2021թ.
3	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	N 222 02.08.2017թ. 02.08.2027թ.
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	N 199 09.10.2014թ. 09.10.2024թ.
2	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	N 201 24.03.2015թ. 24.03.2025թ.
3	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան	N 209 29.12.2015թ. 29.12.2025թ.

4	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	ք. Գորիս	N 213 09.07.2016թ. 09.07.2026թ.
5	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	N 215 21.12.2016թ. 21.12.2026թ.
6	«ՏԵԼԵՌԱԴԻՈ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	ԿՀ N 268 24.08.2019թ. 24.08.2029թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
–	–	–	–
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	N 227 30.09.2017թ. 30.09.2027թ.

Հավելված 4

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2019 թվականի տարեկան հաղորդման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հ/հ	**Ընկերության անվանումը, ռադիոծրագրի անվանումը**	**Սփռման տարածքը**	**Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի առաջին ծրագիր «ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ»	Հայաստանի Հանրապետություն	-
2	«ՌԱԴԻՈ ՊՌՌ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՋԱՆ» ռադիոծրագիր	Հայաստանի Հանրապետություն	N 230 06.10.2017թ. 06.10.2027թ.
3	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոծրագիր	Հայաստանի Հանրապետություն	N 231 06.10.2017թ. 06.10.2027թ.

4	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոծրագիր	Հայաստանի Հանրապետություն	N 232 06.10.2017թ. 06.10.2027թ.
Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի երկրորդ ծրագիր «ԻՄ ՌԱԴԻՈ»	ք. Երևան	-
2	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՎԷՄ» հոգևոր-մշակութային ռադիոծրագիր	ք. Երևան	-
3	«ԷՌ ԷՖ ԱՅ» (RFI) ֆրանսիական ռադիոծրագիր	ք. Երևան	-
4	«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ «ՄԻՐ» ռադիոծրագիր	ք. Երևան	-
5	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ «ԱՎՏՈՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 233 06.10.2017թ. 06.10.2027թ.
6	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 234 06.10.2017թ. 06.10.2027թ.
7	«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 235 06.10.2017թ. 06.10.2027թ.
8	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 236 06.10.2017թ. 06.10.2027թ.
9	«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ «ՓՈՓ ԷՖ ԷՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 237 06.10.2017թ. 06.10.2027թ.
10	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ «ԻՄՊՈՒԼՍ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 238 06.10.2017թ. 06.10.2027թ.
11	«ՖՄ-105.5» ՍՊԸ «ՀԱՅ ՖՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 239 06.10.2017թ. 06.10.2027թ.
12	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ «ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 240 06.10.2017թ. 06.10.2027թ.
13	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ «ՎԱՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 241 06.10.2017թ. 06.10.2027թ.

14	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 242 06.10.2017թ. 06.10.2027թ.
15	«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ «ԵՎՐՈՊԱ ՊԼՅՈՒՍ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 243 06.10.2017թ. 06.10.2027թ.
16	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 244 06.10.2017թ. 06.10.2027թ.
17	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ «ԱՐՄՆՅՈՒԶ ՖՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 245 06.10.2017թ. 06.10.2027թ.
ՄԵԿ ՄԱՐԶ			
1	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ռադիոծրագիր	ՀՀ Շիրակի մարզ	N 246 06.10.2017թ. 06.10.2027թ.
2	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ՄԻԳ» ռադիոծրագիր	ՀՀ Լոռու մարզ	N 247 06.10.2017թ. 06.10.2027թ.

Հավելված 5

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2019 թվականի տարեկան հաղորդման

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

հ/հ	**Ընկերության անվանումը**	**Սփռման տարածքը**	**Որոշման ամսաթիվը, համարը**	**Լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը**
1	«ՄԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌՀ 22.01.2019թ. թիվ 1-Ա որոշում	ԿՀ N 263 01.02.2019թ.
2	«ՌԱԶՆԵՏԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌՀ 19.02.2019թ. թիվ 10-Ա որոշում	ԿՀ N 264 20.02.2019թ.
3	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	ՀՌՀ 04.04.2019թ. թիվ 28-Ա որոշում	ԿՀ N 265 08.04.2019թ.
4	«ԱՐՄՔՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌՀ 14.06.2019թ. թիվ 59-Ա որոշում	ԿՀ N 266 17.06.2019թ.

5	«ՖԱՎՈՐԻՏ ԹԻ ՎԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌՀ 04.07.2019թ. թիվ 74-Ա որոշում	ԿՀ N 267 09.07.2019թ.
6	«ՏԵԼԵՌԱԴԻՈ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	ՀՌՀ 23.08.2019թ. թիվ 95-Ա որոշում	ԿՀ N 268 23.08.2019թ.
7	«ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Գեղարքունիքի մարզ	ՀՌՀ 23.08.2019թ. թիվ 94-Ա որոշում	ԿՀ N 269 27.08.2019թ.
8	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Տավուշի մարզեր	ՀՌՀ 11.09.2019թ. թիվ 98-Ա որոշում	ԿՀ N 270 16.09.2019թ.
9	«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր	ՀՌՀ 27.09.2019թ. թիվ 103-Ա որոշում	ԿՀ N 271 07.10.2019թ.
10	«ՅՈՏԱ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի մարզեր	ՀՌՀ 27.09.2019թ. թիվ 104-Ա որոշում	ԿՀ N 272 07.10.2019թ.
11	«ՇԱՐԿ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌՀ 01.11.2019թ. թիվ 119-Ա որոշում	ԿՀ N 273 05.11.2019թ.
12	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզեր	ՀՌՀ 06.12.2019թ. թիվ 139-Ա որոշում	ԿՀ N 274 10.12.2019թ.

Հավելված 6

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2019 թվականի տարեկան հաղորդման

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՐԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

հ/հ	Ընկերության անվանումը	Որոշման ամսաթիվը համարը	Լիցենզիայի համարը, սփռման տարածքը	Դադարեցման հիմքը
Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններ				
1	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱ ԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ՀՌՀ 18.03.2019թ. թիվ 26-Ա որոշում	N 138 ք. Արմավիր	դիմումի համաձայն
2	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	-	N 133 ք. Ճամբարակ	լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով
3	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ	ՀՌՀ 07.08.2019թ. թիվ 83-Ա որոշում	ԿՀ N 261 Հայաստանի Հանրապետություն	դիմումի համաձայն
4	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ՀՌՀ 23.08.2019թ. թիվ 92-Ա որոշում	N 197 ՀՀ Կոտայքի մարզ	դիմումի համաձայն
5	«ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՌՀ 23.08.2019թ. թիվ 94-Ա որոշում	N 136 ք. Գավառ	դիմումի համաձայն
6	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	ՀՌՀ 11.10.2019թ. թիվ 110-Ա որոշում	ԿՀ N 260 ք. Երևան	դիմումի համաձայն
7	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	ՀՌՀ 06.12.2019թ. թիվ 139-Ա որոշում	N 195 ք. Երևան, Արարատի, Կոտայքի մարզեր	դիմումի համաձայն

8	«ՈՒԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՌՀ 06.12.2019թ. թիվ 140-Ա որոշում	N 225 ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր	դիմումի համաձայն
Եթերային հեռարձակում իրականացնող տեղական հեռուստաընկերություններ				
1	«ՔԱՄՈՒՏ» ՍՊԸ	ՀՌՀ 11.03.2019թ. թիվ 18-Ա որոշում	N 81 ք. Նոյեմբերյան	դիմումի համաձայն
2	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ	ՀՌՀ 04.04.2019թ. թիվ 29-Ա որոշում	N 97 ք. Սպիտակ	դիմումի համաձայն
3	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ	ՀՌՀ 04.04.2019թ. թիվ 30-Ա որոշում	N 85 ք. Իջևան	դիմումի համաձայն
Թվային ցանցով եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններ				
1	«ՏԱՎՈՒՇ-ՏՎ» ՍՊԸ	-	N 159 ՀՀ Տավուշի մարզ	Հանձնաժողովի հայցի համաձայն թիվ ՎԴ2/0324/05/18 գործով ՀՀ վարչական դատարանի 2019 թվականի հուլիսի 23-ի վճռով

Հավելված 7

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2019 թվականի տարեկան հաղորդման

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը	Հեռուստածրագրի անվանումը	Որոշման ամսաթիվը, համարը	Լիցենզիայի համարը, սփռման տարածքը
1	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	«Էֆ Թիվի Կիդս»	ՀՌՀ 19.02.2019թ. թիվ 12-Ա որոշում	ԿՀ N 274 ք. Երևան, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզեր
2	«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	«1-ին թիվի Առաջին լրատվական»	ՀՌՀ 19.02.2019թ. թիվ 13-Ա որոշում	ԿՀ N 263 Հայաստանի Հանրապետություն
3	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	«Սան» «Վելառի»	ՀՌՀ 20.05.2019թ. թիվ 52-Ա որոշում	N 253 ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզեր
		«Արմտուն» «Վի»	ՀՌՀ 01.11.2019թ. թիվ 120-Ա որոշում	
		«Այ-Թի-Սի»	ՀՌՀ 20.12.2019թ. թիվ 145-Ա որոշում	
4	«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊԸ	«Ջունիոր» «Ֆորվրդ»	ՀՌՀ 07.08.2019թ. թիվ 84-Ա որոշում	N 255 ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի մարզեր

5	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	«Սերիալ»	ՀՌՀ 14.08.2019թ. թիվ 88-Ա որոշում	N 205 Հայաստանի Հանրապետություն
6	«ՇԱՆԹ» ՍՊԸ	«Շանթ Քիդս»	ՀՌՀ 11.10.2019թ. թիվ 109-Ա որոշում	N 216 Հայաստանի Հանրապետություն
		«Շանթ Սպորտ»	ՀՌՀ 11.11.2019թ. թիվ 126-Ա որոշում	
7	«ՇԱՐԿ» ՍՊԸ	«5 պլյուս»	ՀՌՀ 06.12.2019թ. թիվ 137-Ա որոշում	ԿՀ N 273 Հայաստանի Հանրապետություն